

---

## ԱԾԱԿԱՆԸ ԵՎ ՄԱԿՐԱՅԸ ՈՐՊԵՍ ԲԱՅԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ

### ԼՈՒՇԱ ՍԱՐԳԱՅԱՆ

Հայոց լեզվի զարգացման բոլոր փուլերում բայց միակ խոսքի մասն է, որն ունի ոչ միայն իմաստային, այլև ծեային ընդհանրություն, ուստի և այլ խոսքի մասերի բայական փոխակերպումը ենթադրում է առանձնահատուկ ծեավորում, որով նորակազմ բառը ծեռք է բերում բայի բոլոր հատկությունները: Այլ խոսքի մասերի փոխակերպումը բայի ինչ-որ չափով նպաստում է նաև խոսքի սեղմությանը<sup>1</sup>: Փաստերը ցույց են տալիս, որ հայոց լեզվում ամենից շատ բայանում են գոյական անունները: Այս հոդվածում մեր նպատակն է որպես բայակազմական հիմք քննել ածականը և նակրայը:

Ածական անունները, ցույց տալով առարկայի՝ հարաբերականորեն կայուն հատկանիշ, հաղորդակցման պահանջներից կամ խոսքի համատեքստից ելնելով, հաճախ բայանում են՝ ցույց տալով փոփոխվող հատկանիշ, կամ այլ կերպ ասած՝ ծեռք են բերում ընթացայնության հատուկ դրսւորում<sup>2</sup>, ինչպես՝ բարակ-բարակել, թեթև-թեթևանալ, ճերմակ-ճերմակել, նիհար-նիհարել, կանաչ-կանաչել, ցուրտ-ցրտել, նուրբ-նորբանալ, ուժեղ-ուժեղանալ և այլն:

Ածականներով վերլուծական տիպի բայեր (ածական հարադիր + բայ) համեմատաբար քիչ են կազմվում, և նման կաղապարում ածականները հանդես են գալիս ստորոգելիական վերադիրի շարահյուսական պաշտոնով, ընդ որում հարադրության կազմում գերազանցապես հանդես են գալիս իսկական բարդությամբ ածական հարադիրները, որոնք, հիմնականում հարադրվում են անել, լինել բայերի հետ<sup>3</sup>: Այս իրողությունը բացատրվում է նրանով, որ իսկական բարդությամբ ածական հարադիրների վերջնաբաղադրիչները գերազանցապես բայարմատներ են, օրինակ՝ արմատախիլ անել (լինել), բնացինք անել (լինել), զինաթափ անել (լինել), թևաթափ անել (լինել), կայծակնահար անել (լինել), խեղդամակ անել (լինել), ուշագնաց լինել, հետամուտ լինել և այլն: Սույն կաղապարով ծեավորված վերլուծական բայերը երբեմն հանդես են գալիս համադրական կազմությամբ ևս, ընդ որում անել բայով կազմվածներին համապատասխանում են ներգործական, իսկ լինել բայով կազմվածներին՝ կրավորական սեռի բայերը, ինչպես՝ բնաջնջել – բնաջնջվել, զինաթափել – զինաթափվել, թևաթափել – թևաթափվել և այլն:

<sup>1</sup> Տե՛ս **L. Եգեկյան**, Հայոց լեզու, Եր., 2005, էջ 167:

<sup>2</sup> Տե՛ս **Գ. Զահորկյան**, ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 199:

<sup>3</sup> Տե՛ս **Ալ. Մարգարյան**, Հայերենի հարադիր բայերը, Եր., 1966, էջ 126:

Պարզ և ածանցավոր ածականներով հարադրավոր բայերը մեծ թիվ չեն կազմում: Նման հարադրությունների համար Ալ. Մարգարյանը առանձնացնում է հետևյալ հիմնական ինաստային հարաբերությունները.

ա) **Անել** բայի հետ հարադրվելով՝ գործողության պատճառականություն են արտահայտում, ինչպես՝ *արժանի անել – արժանացնել*, բախտավոր անել – բախտավորեցնել, հավասար անել – հավասարեցնել, քաղցր անել – քաղցրացնել և այլն:

բ) **Լինել** բայի հետ հարադրվելով՝ վերածնան ինաստ են արտահայտում, ինչպես՝ *աներևույթ լինել – աներևութանալ*, անհետ լինել – անհետանալ, անհանգիստ լինել – անհանգստանալ և այլն<sup>4</sup>:

Վերլուծական տիպի բայերում ածականը նաև հանդես է գալիս փոխանվանաբար, ինչպես՝ *բարձրից նայել*, *սկը տալ*, *կարմիր կապել*, *ճերմակին տալ*, *նեղը գցել*, *նեղն ընկնել*, *նեղը լծել*, *շոգերն ընկնել*, *չորը կապել* (ժ.՝), *պաղին գոնել*, *ցուրտը տանել* և այլն:

Համադրական եղանակով ածական անունները ժամանակակից հայերենում բայանում են -անալ և -ել բայական մասնիկներով: Առանց -անսուկածանցի -ալ մասնիկը այլևս կենսունակ չէ, իսկ առկա իրողությունները ժամանակակից հայերենը ժառանգել է հայոց լեզվի նախորդ փուլերից: Հարկ է նշել, որ -անալ մասնիկի գործուն դառնալու հետևանքով -ալ մասնիկով կազմված ածականակերտ բայերը հաճախ ծեռք են բերել -անալ-ով զուգահեռ տարբերակներ, ինչպես՝ *կաղալ-կաղանալ*, *հոխորտալ-հոխորտանալ*, *խորխստալ-խորխստանալ* և այլն: Նշված բայազույգերը թեև երկուստեք չեզոք սերի են, սակայն ունեն ինաստային որոշակի տարբերություններ, որով էլ պայմանավորված է տարբերակների գոյությունը, ինչպես՝ *կաղալ* «1. Դժվարությամբ ոտքը (կամ ոտքերը) քարշ տալ (ոտքերի հիվանդության պատճառով): 2. փիսք. Ետ մնալ, թերանալ, վատ ինանալ, վատ հասկանալ, լավ չյուրացնել (որևէ ուսումնական առարկա): 3. փիսք. Պակասություններ ունենալ, որևէ բանով լիարժեք չլինել: 4. փիսք. Որևէ տեսակետից թերի՝ անկանոն լինել: 5. թերի գիտելիքներ ունենալ»: Կաղանալ «Կաղ դառնալ»<sup>5</sup>:

Ածականները գերազանցապես բայանում են -անալ մասնիկով: Բացի այդ՝ սույն մասնիկով տեսականորեն հնարավոր է բայեր կազմել բոլոր ածականներից<sup>6</sup>: Թերևս դա է պատճառը, որ -ել լցորդությամբ ածականակազմ բայերը զուգահեռ ունեն նաև -անալ-ով կազմված տարբերակներ:

-Անալ մասնիկով կազմված բայերը ունեն նախատիպի ցույց տված հատկանիշը ծեռք բերելու բառակազմական նշանակություն: Այս եղանա-

<sup>4</sup> Ալ. Մարգարյանը բերում է նաև այնախի օրինակներ, որտեղ ածականները, անել կամ լինել բայերի հետ հարադրվելով, այլ ինաստներ են արտահայտում, օրինակ՝ անտես անել-անտեսել, անպատիլ անել-անպատիլ, խայտառակ լինել-խայտառակվել և այլն (տես նույն տեղը, էջ 127-128): Սակայն, օրինակ, անգիր անել հարադրական բայը չունի համադրական եղանակով կազմված զուգահեռ բայ:

<sup>5</sup> Բոլոր բացատրությունները բերում ենք Եղ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանից», Եր., 1976:

<sup>6</sup> Տես Գ. Զահոռվյան, ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքներ, Եր., 1974, էջ 524:

կով կազմվում են չեզոք սերի բայեր, ինչպես՝ առողջանալ, երջանկանալ, կայունանալ, կոպտանալ, կլորանալ, մտերմանալ և այլն<sup>7</sup>:

-Ել մասնիկով ածականակազմ չեզոք բայերն ունեն նախատիպ ածականի հատկանիշը ծեռք բերելու, ստանալու բառակազմական նշանակություն, ինչպես՝ ապշել, կանաչել, փափկել և այլն: Իսկ ներգործական սերի ածականահիմք բայերն ունեն նախատիպ ածականի հատկանիշով օժտելու բառակազմական նշանակություն, ինչպես՝ հարթել, մաքրել և այլն<sup>8</sup>:

-Ել մասնիկով ածականակազմ մի շարք բայեր ունեն -անալ վերջավորությամբ այնպիսի զուգահեռ տարբերակներ, որոնց հետ ընդհանուր իմաստով համընկնում են, սակայն նաև հանդես են բերում ինաստային տարբերություններ, ինչպես՝ դեղնել-դեղնանալ, ցամաքել-ցամաքանալ, տափակել-տափականալ, համարձակվել-համարձականալ, նիհարել-նիհարանալ և այլն: Սովորաբար -Ել մասնիկով ածականահիմք բայերը ավանդված են հայոց լեզվի վաղ փուլերից, որի հետևանքով գերազանցապես բազմիմաստ են: Իսկ -անալ մասնիկով կազմված բայերը սովորաբար արտահայտում են նիհայն նախատիպի ցուց տված հատկանիշը ծեռք բերելու գաղափար: Ինչպես օրինակ՝ համարձակվել «1. Վստահություն ունենալ որևէ բան անելու, ասելու ևն: 2. Չքաշվել, հանդգնել: 3. Խիզախել, քաջություն ունենալ մի բան անելու»: Համարձականալ «Համարձակ դառնալ, համարձակություն ստանալ»: Ցամաքել բայն, ըստ Է. Աղայանի բառարանի, ունի 12 իմաստ, իսկ ցամաքանալ բայը՝ մեկ իմաստ:

Ածական նախատիպերից -Ել մասնիկով կազմվում են նաև ակտիվ գործողության գաղափար արտահայտող բայեր, օրինակ՝ ապահովել, բարել, պարզել, պահպանել, հաղթել, կեռել, հաստատել և այլն: Նման բայերը անալ-ով զուգահեռների հետ ունեն ինչպես ընդգծված քերականական (սեռային), այնպես էլ ինաստային որոշակի տարբերություններ, ինչպես՝ հաստատել նր. «1. Սահմանել, կարգել: 2. Մի բան իբրև ստույգ՝ ուղիղ ընդունել, հավանություն տալ: 3. Մի բանի ստուգությունը վկայել: 4. Ապացուցել: 5. Վավերացնել: 6. Պաշտոնապես վերջնական վճիռ, որոշում կայացնել: 7. Օրինական ուժ տալ, օրինականացնել որևէ նշանակում, որոշում, կոչում ևն: 8. Անրացնել, հաստատուն դարձնել»: Հաստատանալ չը. «Հաստատ, հաստատուն դառնալ»:

Նորել նր. «1. Նորացնել, նորոգել, նոր դարձնել: 2. չը. Լուսնային ամիսն սկսվել, նորանալ: 3. Նորոգվել, նորանալ»: Նորանալ չը. «1. Նոր դառնալ, նորոգվել, նորոգվելով, վերանորոգվելով՝ նոր դառնալ: 2. Վերստին կրկնվել, նորից նույն թափով երևան գալ՝ դրսնորվել»:

Բայի փոխակերպվելիս ածականը կառուցվածքային սահմանափակումներ չունի: Հավասարապես փոխակերպվում են ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ կազմությամբ ածականները: Այնուամենայնիվ, ի տարբերություն բարդության մյուս տեսակների, բավականին կենսունակ են իսկական բարդության կաղապարով ձևավորված ածականներից կազմված

<sup>7</sup> Տե՛ս Ս. Գալստյան, Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Եր., 1978, էջ 248, Ա. Աբրահամյան, Բայը ժամանակից հայերենում, Եր., 1962, էջ 61-62:

<sup>8</sup> Տե՛ս Ս. Գալստյան, նշվ. աշխ., էջ 248:

բայերը, ինչպես՝ հայելապատել, ամրապնդել, բացահայտել, ակնհայտանալ, սահմանափակել, բնաջնջել, գահավիժել, երկիեղկել, կռապաշտանալ և այլն:

Կրկնավոր կազմությամբ ածականներից կերտված բայերը զգալիորեն սակավաթիվ են, դրանցից են՝ երերալ, կակագել, դողդոջալ, կերկերալ և այլն:

Իսկ կցական կաղապարով կազմված ածականները բայանում են գերազանցապես հարադրական եղանակով, ինչպես՝ լեկիլեցուն լինել, գունդուկի դառնալ, ցիրուցան անել, մերձինահ լինել և այլն:

Նախածանցավոր և վերջածանցավոր կազմությամբ ածականները ևս ակտիվորեն բայանում են և ունեն բավական կենսունակ գործածություն, ինչպես՝ տկարանալ, հարակայանալ, ապաշնորհանալ, բացակայել, դժգոհել, տարածանել, համեղանալ, գորավորանալ, թլպատել, հանճարեղանալ, շեղատել, ռնգայնանալ, հասունանալ և այլն:

Արհասարակ ածականահինք բայերի նման քննությունը որոշ պայմանականություն ունի, քանի որ, ինչպես նշել ենք վերը, տեսականորեն բոլոր ածականներից -ամալ մասնիկով հնարավոր է բայեր կազմել, որոնք եթե բառարաններում ամրագրված իսկ չեն, այնուամենայնիվ չեն հակասում հայ լեզվամտածողությանը և անհրաժեշտության դեպքում ազատորեն կարող են կիրառվել:

Սակայն հարկ ենք համարում նշել, որ անգամ -ամալ մասնիկով չեն բայանում հարակատար դերբայի մի շարք ածականացած տարբերակները, որոնցից են՝ խմած, ընկած, կարդացած, հասած, հոտած և այլն:

Ժամանակակից հայերենում փոխառյալ ածականները ևս մասնակցում են բայակերտնանը -ամալ մասնիկով, ինչպես՝ ակտուալանալ, նորմալանալ, ստարիլանալ, սխոլաստիկանալ, սինխրոնանալ, հերմետիկանալ, մոդեռնանալ, վուգարանալ, էլեկտրականանալ և այլն:

Մի փոքր այլ է բայակազմությունը -ել դերբայական մասնիկով, քանի որ այդ բայերի մեծ մասը հիմնականում ավանդված է հայոց լեզվի նախորդ փուլերից, ինչպես՝ ազատել, բարակել, դեղնել, լուսավորել, կարմրել, կրթել, հաղթել, ծգել, ծշտել, ուղղել և այլն: Այս շարքում առանձնանում են այնպիսի ածականներ, որոնք ինքնին բայահիմքեր են և հավասարապես գործածվում են նաև որպես որոշիչ ածականներ, ինչպես՝ անջատ-անջատել, զուրկ-զրկել, կախ-կախել և այլն<sup>9</sup>: Ժամանակակից հայերենում -ել վերջավորությամբ են բայանում նաև -ատ, -ավոր, -ու վերջածանցներով կազմված ածականները: Դատկանշական է, որ -ատ, -ավոր ածանցներով կաղապարված ածականներից կազմվում են ներգործական սերի բայեր, իսկ -ու ածանցով ծևավորված ածականներից՝ և չեզոք, և ներգործական սերի բայեր, ինչպես՝ լուսավորել (նք), երանգավորել (նք), կամոնավորել (նք), թևավորել (նք), կրծատել (նք), շեղատել (նք), ոջլոտել (չք), կավճոտել (նք) և այլն:

<sup>9</sup>Տե՛ս Գ. Զահուկյան, ժամանակակից հայոց լեզվի տեսության հիմունքներ, էջ 524:

Սակայն սա չի նշանակում, որ -անալ մասնիկը տվյալ դեպքում անարտադրողական է, նույնիսկ կան օրինակներ, եթե նման կազմությամբ ածականը բայանում է միայն -անալ-ով, ինչպես՝ *զորավոր-զորավորանալ, երկշոտ-երկշոտանալ* և այլն:

-Ել մասնիկով են բայանում նաև բաղադրյալ կազմությամբ այնպիսի ածականներ, որոնց բառակազմական վերջին բաղադրիչը ել ծորդության բայի արմատ է, ինչպես՝ *աշխարհազրկել, ջրազրկել, առասպելազերժել, արարագերժել, դոլարազրկել<sup>10</sup>, ապակեպատել, ռետինապատել, խանդավառել, գոռոզամտել, հայելապատել, գունազարդել, պսակազարդել, քաղաքակրթել, բարեկրթել, հեռակայել, բացակայել, արժաթազօժել, ուկեզօժել, գերակշռել, գոտեպանդել* և այլն: Ինչպես երևում է բերված օրինակներից, նախատիպ ածականները կազմված են NV, AV, MV արտադրողական կաղապարներով (N – գոյական, V – բայ, A – ածական, M – մակրայ):

Ածականին հաճախ հարաբերակից մակրայը հայերենում հազվադեպ է բայանում, այն էլ հիմնականում վերլուծական տիպով: Հատկապես աչքի են ընկնում, ինչպես Ս. Աբեղյանն է նշում, օտար լեզուների նախդրավոր բայերին հարաբերակից տեղի մակրայներից մի շարք բայերով ձևավորված հարադրական բայերը: Ի տարբերություն այլ վերլուծական բայերի՝ այս կաղապարում բայը գործածվում է ոչ թե վերացական ինաստով, այլ պահում է իր նյութական իմաստը, իսկ մակրայը «միայն ձևափոխում է, զորացնում կամ պարզում է բայի նշանակությունը»<sup>11</sup>: Այդ կիրառությանը հանդես են գալիս *առաջ, դեմ, դեն, դես, դուրս, ետ/հետ, ընդառաջ, հեռու, մեջ, մոտ, ներս, շուրջ>շուր, վայր, վեր, վրա, ցած մակրայները*<sup>12</sup>, որոնք հարադրությունների կազմում բայերի հետ միասնական են և բառական ընդհանուր նշանակություն ունեն<sup>13</sup>: Նշված բոլոր մակրայները հարադրությունից դուրս մեծ մասամբ մեկից ավելի խոսքիմասային նշանակություն ունեն՝ գոյականի, ածականի, մակրայի, կապի:

Տնան հարադրությունների մեջ գերազանցապես հանդես են գալիս դինամիկ բնույթի գործողության գաղափար արտահայտող բայեր, ինչպես՝ *ածել, անել, անցնել, առնել, բարձրանալ, բերել, բռնել, գալ, գնալ, գրել, գցել, դիմել, դնել, ելնել, ընկնել, թափել, թողնել, թռչել, իջնել, լցնել, խաղալ, խլել, խուժել, կանչել, կոչել, կորզել, հանել, և այլն, մասամբ նաև դադարման ու դրության գաղափար արտահայտող բայեր, ինչպես՝ *կանգնել, կենալ, լինել, մնալ* և այլն<sup>14</sup>: Օրինակ՝ *առաջ անցնել, առաջ գալ, դեմ**

<sup>10</sup> Օրինակները քաղել ենք Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանից», Եր., 2002:

<sup>11</sup> Ս. Աբեղյան, Երկեր, հ. 2, Եր. 1974 էջ 138:

<sup>12</sup> Ցանկը ներկայացնելիս օգտվել ենք Ալ. Մարգարյանի նշված գրքից (էջ 135): Ս. Աբեղյանի և Ա. Աբրահամյանի կողմից ներկայացված մակրայների շարքին Ալ. Մարգարյանը ավելացրել է *հեռու, ընդառաջ մակրայները*, որոնք ևս տեղի ինաստ են արտահայտում:

<sup>13</sup> Ա. Աբրահամյանը կարծում է, որ բյուրինացություն է *հետ, մոտ, վրա* բառերի հոդերով գործածությունը զանազան բայերի հետ հարադրություն համարենք (ինչպես՝ *հետը բերել, վրան նայել և այլն*): Նրա կարծիքով, նման կառույցները ոչ թե կայուն հարադրություններ են, այլ շարակիուսական առանձին միավորներ (տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 181):

Տե՛ս նույն տեղը, էջ 183:

անել, դեն նետել, դուրս գցել, ետք բերել, մեջ քաշել, մոտք բերել, ներս հրավիրել, շուր գալ, վայր իջնել, վեր բարձրանալ, վրա հասնել, ցած ընկնել և այլն:

Քննարկվող տիպի հարադրությունները հիմնականում գործածվում են ուղղակի իմաստներով: Սակայն որոշ հարադրություններ զուգահեռաբար հանդես են գալիս նաև փոխաբերական իմաստներով, որոնք գոյանում են հարադրությունների ուղղակի իմաստների հիման վրա, ինչպես՝ առաջ գալ, դուրս տալ, դեն ընկնել, դուրս բերել, դուրս գալ, ներս գցել, մեջ գցել, մեջ բերել և այլն:

Ածանցավոր մակրայները սովորաբար չեն մասնակցում բայակերտմանը: Սակայն նկատելի է մի հետաքրքիր օրինաչափություն. Երբեմն բայանում են որոշ մակրայներ՝ կազմված այնպիսի մակրայակերտ ածանցներով, որոնք զուգահեռաբար նաև ածականակերտ են, օրինակ՝

**-ակի՝ շեշտակիանալ, շեղակիանալ, հաճախակիանալ**

**-ագին՝ մոլեգնել, ուժգնանալ**

**-պատիկ՝ բազմապատկել, հնգապատկել, քառապատկել և այլն<sup>15</sup>:**

Բերված օրինակների նախատիպ հիմքերը ունեն խոսքիմասային երկարժեքություն (ածական, մակրայ), ուստի կարելի է եզրակացնել, որ հենց այս հանգանանքով է պայմանավորված վերոնշյալ բառերի բայացումը:

Քննությունը ցույց է տվել, որ բուն մակրայակերտ ածանցներով կազմված մակրայները չեն բայանում:

Իսկական բարդության կաղապարով ձևավորված մակրայների քանակը հայերենում թիւ է, և որանք գերազանցապես զուգահեռաբար ունեն նաև ածականի խոսքիմասային արժեք: Սակավաթիվ են նաև նման մակրայներով կազմված բայերը, ինչպես՝ բարձրածայնել, միաձայնել և այլն: Գործում են նաև հարադրական եղանակով բայացնան կաղապարներ, ինչպես՝ միաբերան լինել, միաձայն դառնալ և այլն:

Բաղիյուսական կազմություն ունեցող մակրայները բայանում են միայն վերլուծական տիպով, ինչպես՝ աջ ու ձախ ընկնել, ետք ու առաջ անել, վար ու վեր անել, դեն ու դեն ընկնել և այլն:

Կցական կազմությամբ մակրայները նույնպես երբեմն բայանում են հարադրական եղանակով, ինչպես՝ մեջտեղ գալ և այլն:

Յայերենում մակրայների մի մասը կազմվել և կազմվում է բերականական ձևերից, որոնք երբեմն բայանում են, ինչպես՝ սակավանալ, կամացանալ և այլն: Յարկ է նշել սակայն, որ բերված օրնակների բայակազմական հիմքերը նույնպես զուգահեռաբար ունեն ածականի խոսքիմասային իմաստ:

Յայագիտական աշխատություններում նշվող արմատական կամ կազմությամբ պարզ համարվող մակրայներից բայանում են հետևյալները.

<sup>15</sup> Ս. Աբրահամյանը -պատիկ ածանցը որպես մակրայակերտ ածանց չի նշում (տես Ս. Աբրահամյան, ժամանակակից հայերենի չքեքվող խոսքի մասերը, Եր., 1959, էջ 35-44):

արագ – արագանալ	շատ – շատանալ
առաջ – առաջանալ	շտապ – շտապել
դանդաղ – դանդաղել, դանդաղանալ	շուրջ – շրջել
խեթ – խեթել	վեր – վերանալ
կանուխ – կանխել	ուղիղ-ուղղել
կրկին – կրկնել	ուշ-ուշանալ
հաճախ – հաճախել, հաճախանալ	քիչ-քչանալ
մոտ – մոտենալ	

Նկատելի է, որ ավանդաբար փոխանցված -ել վերջավորությանը ձևավորված մի քանի ձևերի կողքին զուգահեռ գործում են նաև -անալ վերջավորությամբ տարբերակներ, ինչպես՝ դանդաղել-դանդաղանալ, հաճախել-հաճախանալ։ Դժվար չէ նկատել այս բայազույգերի իմաստային տարբերությունները. -անալ տարբերակով ձևավորված բայերը ունեն նախատիափ ցույց տված հատկանիշի ձեռքբերման նշանակություն, ինչպես՝ դանդաղ, հաճախ դառնալ։ Իսկ -ել մասնիկով ձևավորված բայերը բազմիմաստ են, նույնիսկ հաճախել ներգործական սերի բայց իմաստային զարգացման հետևանքով ծերք է բերել չեզոք սերի այնախսի իմաստներ, որոնք բավականին հեռացել են նախնական իմաստից։ Ու թեև է Աղայանը առաջին հերթին նշում է այս բայի «1. Շատացնել, ավելացնել, հաճախակի դարձնել։ 2. Հաճախ կրկնել, հաճախ նույն բանն անել։ 3. չբ. Հաճախանալ, աճել, բազմանալ, ավելանալ» իմաստները, սակայն ժամանակակից հայերենում բայց գերազանցապես կիրառվում է «4. Հաճախակի որևէ տեղ գնալ՝ այցելել։ 5. Գնալ, շարունակաբար լինել՝ ներկայանալ մի տեղ։ 6. Մասնակցել (ժողովների, հավաքույթների և այլն)» իմաստներով<sup>16</sup>:

Հետաքրքիր է նկատել, որ որպես բայակազմական հիմք հանդես եկող վերը նշված արմատական մակրայների խոսքիմասային արժեքը միատարր չի եղել նաև իին հայերենում։ Նշված մակրայները զուգահեռ ունեցել են նաև ածականի (արագ, դանդաղ, խեթ<sup>17</sup>, կանուխ, կրկին, հաճախ, հավերժ, հեռու, շատ, շտապ, ուղիղ), գոյականի (առաջ<sup>18</sup>, հաճախ, շտապ), կապերի (մոտ, հեռու, վեր, շուրջ) խոսքիմասային իմաստներ:

Քիչ բառի խոսքիմասային պատկանելությունը ՆՅԲ-ում տրված չէ, սակայն այն բացատրվում է սակաւ հոմանիշով, որը բնութագրվում է որպես ածական:

Իսկ ուշ բառը ժամանակակից իմաստով իին հայերենում լայն տարածում չի ունեցել, այն իմաստային անցում է կատարել յուշ, յուշիկ «հանդարտ, կամացուկ, մեղմիկ, յամր» ձևերից<sup>19</sup>, որոնք ունեցել են մակրայական արժեք, ուշանալ բայն էլ, բնականաբար, անցել է յուշանալ «անազա-

<sup>16</sup> Էդ. Աղայանի «Հայոց լեզվի բացատրական բառարանում» (1976) հաճախել բայի իմաստներից նշվում են 4, 5, 6 կետերին համապատասխանողները:

<sup>17</sup> Ունեցել է միայն ածականի իմաստ:

<sup>18</sup> Ժամանակակից հայերենում սա նաև կապ է:

<sup>19</sup> Տե՛ս «Նոր բառգիրք Հայկագետն լեզուի», հ. 2, Եր., 1981, էջ 375, Յո. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Եր., 1977, էջ 605:

նիլ» բայից (ի դեպ, ՆՀԲ-ում ուշ և ուշանալ ձևերը ունեն ռմկ. նշումները): ժամանակակից հայերենում սակայն ուշ մակրայը ունի նաև ածականի խոսքիմասային նշանակություն:

Վերը շարադրվածից կարող ենք անել հետևյալ եզրակացությունները.

1. Ժամանակակից հայերենում -անալ վերջավորությունը ածական անուններից բայեր կազմելու կենսունակ մասնիկն է: Ասվածի ապացույցն է ածականներից -ել և -ալ պարզ բայակերտ վերջավորությանը ձևավորված ածականահինք բայերին գուգահեռ նույն բառակազմական հիմքով -անալ բաղադրյալ մասնիկով ձևավորված տարբերակի առկայությունը կամ հնարավոր առկայությունը:

2. -Ալ//-անալ, ել//-անալ ածանցներով (մասնիկներով) գուգահեռ տարբերակները հիմնականում ունենում են իմաստային որոշակի տարբերություններ, երբեմն նաև ընդգծված քերականական (սեռային) տարբերություններ (ել//անալ գուգահեռներ ունեցող որոշ բայերի դեպքում):

3. Ժամանակակից հայերենում -ել ցուցիչով են բայի փոխակերպվում այն ածականները, որոնք ձևավորված են -ատ, -ավոր, -ուս վերջածանցներով: Բարդ կազմություն ունեցող այն ածականները, որոնց բառակազմական վերջին բաղադրիչը **ե** լորդություն ունեցող բայի արմատ է, բայի փոխակերպվելիս նույնպես ստանում են -ել մասնիկը:

4. Ամել, լիմել, մասամբ նաև՝ ըմկմել, կեմալ/մնալ (խոր ըմկմել, լուռ կեմալ/մնալ և այլն) բայերը, հարադրվելով կազմությամբ պարզ, ածանցավոր կամ բարդ ածականներին, ձևավորում են հարադրավոր բայեր: Ըստ Ալ. Մարգարյանի՝ ածականը հարադրավոր բայերի կազմում հարադրային մեծ արդյունավետությամբ հանդես եկող խոսքի մասերից է<sup>20</sup>:

5. Ե՛վ ածանցավոր, և արմատական մակրայները՝ որպես բայակազմական հիմք, հիմնականում հանդես են գալիս ոչ թե բուն մակրայական, այլ ածականական խոսքիմասային իմաստով, այսինքն՝ մակրայը «մաքուր» մակրայական նշանակությամբ, որն է՝ գործողության կամ հատկանիշի հատկանիշ ցույց տալը, չի բայանում: Դրանով է բացատրվում նաև այն, որ վերը նշված մակրայները հիմնականում բայանում են -անալ բայակերտ վերջավորությամբ, որով, ինչպես նշել ենք, բայեր են կազմում գերազանցապես ածականները:

6. Հարադրական կառույցներում մակրայը, որ փաստորեն բայի պարագայական լրացումն է, հանդես է գալիս իր բուն խոսքիմասային արժեքով: Եվ նման կառույցներում բայական բաղադրիչը հիմնականում պահպանում է իր բուն նշանակությունը, իսկ մակրայը «միայն ձևափոխում է, զորացնում կամ պարզում է բայի նշանակությունը»<sup>21</sup>:

**ЛУИЗА САРГСЯН – Прилагательное и наречие как глаголообразующая основа.** – В армянском языке глагол всегда морфологически маркирован. Как в

<sup>20</sup>Տե՛ս Ալ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 129:

<sup>21</sup>Մ. Աբեղյան, նշվ. աշխ., հ. Զ, էջ 138:

личной, так и в безличной форме он обладает составной структурой, то есть имеет основу и глагольное окончание. Исследования показывают, что в образовании глаголов участвуют прилагательные и наречия.

В современном армянском отыменные глаголы образуются по синтетическому или аналитическому типу словообразования. Глаголы аналитического типа представляют собой соположение (аппозицию) именных и глагольных компонентов и нередко обладают фразеологическим значением либо выражают действие описательным способом. В последнем случае аналитические глаголы могут иметь также соответствующие синтетические параллели (ср. *աներկույթի լինել* – *աներկութանալ* «ъся», *քաղցր անել* – *քաղցրացնել* «(по)пытаться»). Вербализация прилагательных по синтетическому типу осуществляется с помощью глаголообразующих частиц *-ել*, *-անալ*. Исследование показали, что с помощью *-անալ* возможно образовать глаголы от всех прилагательных.

Вербализация наречий осуществляется только по аналитическому типу, где они являются обстоятельством действия.

**LUIZA SARGSYAN – *Adjectives and Adverbs as Verb-Forming Stems.*** – In Armenian the verb is always morphologically marked. In personal as well as impersonal forms the verb has complex structure i.e. it is comprised of a stem and a verbal ending. The surveys show that the nominal parts of speech – **adjectives** and **adverbs** can take part in the formation of verbs.

In modern Armenian the denominative verbs are formed by analytic and synthetic ways. Analytic verbs are juxtapositions of nominal and verbal components and often have phraseological value. There are also many analytic verbs which have direct meaning and descriptive form. The verbs which have this kind of formation possess parallel synthetic forms with similar roots, e.g. *աներկույթի լինել*, *արժանիմ անել*. The synthetic denominative verbs are formed by the particles *-ել*, *-անալ*, but more actively by the particle *-անալ* and almost always function with parallel construction with *-ել* forms.

Adverbs are verbalized in analytical ways, e. g. *դուրս գալ*, *առաջ գալ*.